ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂԻ ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՐՏԱՇԵՍ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂԻ ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան 2017

ՀԵՂԻՆԱԿ՝ Ա. Խուրշուդյան
ԴԻԶԱՅՆԵՐ՝ Ա. Քյուրքչյան

Ուսուցանվողի հեռաուսուցման ուղեցույց: Եր., 2017, 30 էջ:

© Արտաշես Խուրշուդյան, 2017
© Արդարադատության ակադեմիա, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ինչի՞ց է կազմված հեռաուսուցման փաթեթը
- Ինչպե՞ս օգտվել այս ուղեցույցից
- Ի՞նչ է հեռաուսուցումը
- Ի՞նչ առանձնահատկություններ ունի հեռաուսուցման տեքստը
- Ինչպե՞ս օգտվել բառարանից
- Ի՞նչ և ինչի՞ համար են ինքնաստուգիչ հարցերը
- Ինչպե՞ս է գնահատվում առաջադրանքի կատարումը
- Ի՞նչ աջակցություն է ստանում ուսուցանվողը հեռաուսուցման ժամանակ և ինչպե՞ս

1. ԻՆՉԻ՞Ց Է ԿԱԶՄՎԱԾ ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՓԱԹԵԹԸ

Հեռաուսուցման փաթեթը պարունակում է՝

- ✓ **ուսուցանվողի հեռաուսուցման ուղեցույց**
- ✓ **ուսումնական ձեռնարկ/մոդուլ (reader)**
- ✓ **առարկայի տերմինների բառարան**
- ✓ **ինքնաստուգիչ հարցերի պատասխանների գրքույկ**
- ✓ **մոտիվացնող ներածական տեսանյութեր, տեսանյութ-օրինակներ**
- ✓ **անհրաժեշտ և լրացուցիչ մեդիա-նյութեր** (տեղեկատվություն փոխանցող բոլոր միջոցներից՝ գրքեր, հոդվածներ, ֆիլմեր, տեսանյութեր և այլն)
- ✓ **ուսումնական ծրագիր**
- ✓ **ուսումնական պլան**
- ✓ **հետադարձ գնահատման թերթիկ**
- ✓ **ուսումնական կարիքների գնահատման թերթիկ**

Այժմ Ձեր ձեռքին է ուղեցույցը: Այն հնարավորություն կտա հասկանալու հեռաուսուցման ողջ ընթացքը: Ուղեցույցին ծանոթանալուց հետո նոր միայն արդյունավետ կլինի ձեռնարկի ընթերցումն ու առաջադրանքների կատարումը:

2. ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՏՎԵԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԻՑ

Այս գրքույկը նրանց համար է, ովքեր վերապատրաստվելու կամ սովորելու են հեռաուսուցմամբ: Այն կոչված է լինելու հեռաուսուցման «սեղանի գիրք»: Այստեղ կարող եք գտնել ձեռնարկի հասկացման և առաջադրանքների արդյունավետ կատարման համար անհրաժեշտ ցուցումներ: Այս ուղեցույցը տեսանելի է դարձնում հեռաուսուցման փաթեթի կառուցվածքը: Ուղեցույցը Ձեզ հնարավորություն կտա հասկանալ հեռաուսուցման և այլ տեսակի տեքստերի տարբերությունները:

Ձեռնարկից օգտվելու հետ կապված յուրաքանչյուր դժվարության դեպքում խորհուրդ է տրվում կրկին անդրադառնալ սույն ուղեցույցի համապատասխան բաժնին:

3. Ի՞ՆՉ Է ՀԵՌԱՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Հեռաուսուցում կազմակերպվում է ուսուցանողի կամ ուսուցանվողի ֆիզիկական բացակայության պայմաններում: **Հեռաուսուցում իրականացվում է այն ժամանակ, երբ ուսուցանողն ու տեղեկատվության աղբյուրը և ուսուցանվողը բաժանված են տարածության ու ժամանակի մեջ:** Հեռաուսուցման հիմնական առանձնահատկություններից մեկը, որով այն տարբերվում է առկա ուսուցումից, այն է, որ այստեղ **ուսուցանողը հիմնականում բացակայում է:** Երբեմն կարող է տպավորություն ստեղծվել, թե հեռաուսուցումն ինչ-որ

տեխնոլոգիայի, մասնավորապես՝ համացանցի կիրառումն է ուսուցման մեջ: *Սակայն դա թյուր պատկերացում է:*

Հեռաուսուցում սկզբունքորեն կարելի է կազմակերպել առանց որևէ թվային տեխնոլոգիայի կիրառման:

Հեռաուսուցման ժամանակ ուսուցանվողին փոխանցվում են մեդիա-նյութեր, որոնցից են՝

- ⇒ **տպված ձեռնարկներ, հոդվածներ, գրքեր**
- ⇒ **աուդիո նյութեր**
- ⇒ **տեսանյութեր**
- ⇒ **էլեկտրոնային պաշարներ**
- ⇒ **ինտերնետային պաշարներ և այլն**

Հեռաուսուցման կազմակերպման առաջին փորձերը տեղի են ունեցել 1840-ական թթ. Անգլիայում: Հեռաուսուցման նախատիպը եղել է հեռակա ուսուցումը, որը, երեք անգամ սերնդափոխվելով

(ուսուցման մեջ փոստի, հեռախոսի, ռադիոյի և հեռուստատեսության կիրառումները), վերածվել է հեռաուսուցման: Խորհրդային Միությունում գաղափարախոսական նկատառումներով այդ անցումը չի եղել: Այժմ աշխարհում կան հեռաուսուցման բազմաթիվ համալսարաններ, ինստիտուտներ, կենտրոններ: Ընդ որում՝ շատ երկրներում հեռաուսուցումը համարվում է նաև ազգային կրթական զարգացման հայեցակարգի բաղկացուցիչը:

Հեռաուսուցումը կրթական մեթոդ է, որը լավագույնս ծառայում է ժամանակակից աշխարհում լայնորեն շրջանառվող և կրթությանը վերաբերող հետևյալ գաղափարների կյանքի կոչմանը՝

- *կրթության ժողովրդավարացում*
- *շարունակական կրթություն*
- *ցկյանս կրթություն*
- *աշխատանքի հետ համատեղվող ուսուցում*

Հեռաուսուցման համակարգը նպատակ ունի՝

- մատչելի դարձնել կրթությունն իր բոլոր դրսևորումներով
- հնարավորություն տալ սովորողին սովորել ինչ ուզում է, երբ ուզում է և որտեղ ուզում է

Հեռաուսուցումն ուսուցանվողին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ այն ժամանակ, երբ իրեն հարմար է և որտեղ հարմար է: Այսինքն՝ հեռաուսուցումը հաղթահարում է տարածության և ժամանակի խոչընդոտները:

Հեռաուսուցման բաղկացուցիչ է <u>ինքնուրույն (self-directed) ուսուցումը</u>: Այսինքն, օրինակ, 20 ժամանոց առարկային հեռաուսուցման պարագայում գումարվում է այն անհրաժեշտ ժամանակը, որն ուսուցանվողը պետք է տրամադրի առարկայի յուրացման համար՝ 60 ժամ, այսինքն, ստացվում է այսպես.

տեքստի յուրացում + բառարանի յուրացում + տեսանյութերի դիտում + օրինակների յուրացում + ինքնաստուգիչ հարցերին պատասխանների ներկայացում + առաջադրանքների կատարում = 40 ժամ:

Գոյություն ունեն հեռաուսուցման տարբեր տեսակներ՝

⇒ ***առցանց համաժամանակյա*** *(online) հեռաուսուցում կամ* ***վիրտուալ ուսուցում***

⇒ ***ոչ համաժամանակյա*** *(offline) հեռաուսուցում*

⇒ ***զուգակցված (հիբրիդ) ուսուցում*** *(առերես ուսուցման և հեռաուսուցման զուգակցում):*

Սրանք կարող են իրականացվել տարբեր եղանակներով: Արդարադատության ակադեմիան նպատակադրված է իրականացնել վերը նշված հեռաուսուցման տեսակները հետևյալ ձևաչափերով:

ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ (ONLINE) ՀԵՌԱՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿԱՄ ՎԻՐՏՈՒԱԼ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ իրականացվում է կրթության ոլորտ ներմուծված տեխնոլոգիաներով: Ուսուցանվողը յուրաքանչյուր դասին հատուկ ծրագրի միջոցով որոշակի ժամի միանում է հեռաուսուցման լսարանին կամ ուսուցանողին և տալիս է իրեն հետաքրքրող հարցեր ու ներգրավվում է քննարկման մեջ:

ՈՉ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ (OFFLINE) ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ պարագայում ուսուցանվողը նախապես նշված օրվա մեջ էլեկտրոնային փոստով

ստանում է հեռաուսուցման շաբաթական նյութը (հեռաուսուցման մոդուլի համապատասխան հատվածը), լրացուցիչ ուսումնական էլեկտրոնային գրականությունը, ուսումնական տեսանյութերը և շաբաթական հանձնարարությունը: Մինչև հաջորդ շաբաթվա նշված օրը ուսուցանվողն ուսումնասիրում է բոլոր ուսումնական նյութերը, պատրաստում շաբաթական գրավոր աշխատանքը և ուղարկում այն ուսուցանողին: Առաջնորդվելով հեռաուսուցման ուսումնական պլանով նախատեսված գրաֆիկով՝ ուսուցանողը ստուգում է գրավոր աշխատանքն ու ուղարկում դրա ընթացիկ գնահատականը, հեռաուսուցման ձեռնարկի համապատասխան հատվածը, լրացուցիչ էլեկտրոնային գրականությունը, տեսանյութերն ու շաբաթվա հանձնարարությունը:

Ոչ համաժամանակյա հեռաուսուցումը կարող է իրականացվել նաև հատուկ էլեկտրոնային պլատֆորմի միջոցով, որը անգլերենից կարելի է թարգմանել որպես «Ուսուցման Կառավարման

Համակարգ» – Learning Management System կամ կարճ՝ LMS.

ԶՈՒԳԱԿՑՎԱԾ (ՀԻԲՐԻԴ) ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ենթադրում է, որ ուսուցանվողը նախապես էլեկտրոնային փոստով ստանում է առարկայի փաթեթը կամ հեռաուսուցման կայքի միջոցով օգտվում է համապատասխան ուսումնական նյութերից (տե՛ս, օրինակ, www.coursera.org հեռաուսուցման կայքը)՝ այն ուսումնասիրելու, հասկանալու, վերլուծելու, այլ ուսուցանվողների հետ քննարկելու և այդուհետ համապատասխան առաջադրանքներ կատարելու համար: Ուսուցանվողն առաջադրանքը պատրաստում է և ուղարկում ուսուցանողին էլեկտրոնային փոստի կամ այլ համապատասխան տեխնոլոգիայի միջոցով՝ նախապես նշված օրվա ընթացքում և հատուկ ձևաչափով: Ուսուցանվողը յուրաքանչյուր առարկայի ավարտին՝ նախապես նշված օրվա ընթացքում, մասնակցում է դաս-քննարկմանը, որտեղ

հնարավորություն է ստանում ուսուցանողի և գործընկերների հետ առերես շփման միջոցով քննարկել հեռաուսուցման տարաբնույթ նյութերում ներկայացված թեմաներն ու խնդիրները: Հեռաուսուցման ներկայացված եղանակները կարող են իրականացվել նաև զուգահեռ՝ չբացառելով միմյանց:

4. Ի՞ՆՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՔՍՏԸ

Ստորև բերված է հեռաուսուցման նյութերի և առկա ուսուցման համար նախատեսված դասագրքի համեմատական.

Հեռաուսուցման նյութերը սովորաբար	*Առկա ուսուցման դասագրքերը սովորաբար*
բաժանվում են դասերի,	բաժանվում են գլուխների,

որոնք ներառում են կատարվելիք շաբաթական աշխատանքները	որոնք առանձնացված են լինում ըստ թեմաների, ոչ թե ըստ ուսուցման ժամանակի
ներառում են ուղեցույց, որը ցույց է տալիս նյութերից օգտվելու ձևը	չեն ներառում ուղեցույց
ներառում են օրինակներ	ներառում են օրինակներ
ներառում են բազմաթիվ սխեմաներ և նկարներ	ներառում են քիչ սխեմաներ և նկարներ
ներառում են բազմաթիվ առաջադրանքներ	Առաջադրանքները քիչ են կամ բացակայում են

ներառում են ինքնաստուգիչ հարցերի պատասխաններ	չեն ներառում ինքնաստուգիչ հարցերի պատասխաններ
ուղղված են ուսուցանվողին	ուղղված են դասախոսին և սովորողին
կազմված են հնարավորինս հակիրճ և պարզ ձևակերպված նախադասություններից	կազմված են հակիրճ, միջին և երկարաշունչ նախադասություններից, երբեմն աչքի են ընկնում խրթին ձևակերպումներով
թիրախային են	հասցեագրված են անդեմ լսարանին

Հեռաուսուցման տեքստերը կառուցվում են այն նկատառումով, որ ուսուցանողը միշտ չէ, որ ներկա է և որը կարող է բացատրել տեքստի հասկացման հետ կապված ամեն հարց: Հեռաուսուցման ձեռնարկի տեքստի հիմնական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այնտեղ պարտադիր կա երկու օժանդակող բաղադրիչ՝

• ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂԻ ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ •

- **ցուցումներ**, որոնք նպաստում են հեռաուսուցման ձեռնարկի տեքստի առավել արդյունավետ յուրացմանը
- հեռաուսուցման ձեռնարկի տեքստի տվյալ հատվածի ու ընդհանրապես տեքստի յուրացման համար պահանջվող **միջին ժամանակ**:

Ուսուցանվողը նախապես իմանում է, թե օրական կամ շաբաթական որքան ժամանակ պետք է տրամադրի առարկայի բավարար յուրացմանը, ինչը կարող է նպաստել իր ժամանակի արդյունավետ պլանավորմանը և արդյունավետ ուսանելուն:

5. ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՏՎԵԼ ԲԱՌԱՐԱՆԻՑ

Հեռաուսուցման փաթեթի առանձին բաղադրիչներից մեկն առարկայի տերմինների բառարանն է: Դրա կարևորության հանգամանքից ելնելով՝ փաթեթում այն հանդես է գալիս երկակի. նախ՝ ամեն դասից հետո տրվում է այդ դասում առկա տերմինների բացատրությունը, իսկ այնուհետև՝ առանձին գրքույկով ներկայացվում է ամբողջ առարկայի տերմինաբանական բառարանը:

Հարկավոր է հաշվի առնել այն, որ ***բառարանը զուտ օժանդակ միջոց չէ,*** *այն նաև բացահայտում է առարկայի կառուցվածքային և բովանդակային պատկերը:*

Այնպես որ, բառարանից հաճախակի օգտվելն է՛լ ավելի արդյունավետ կդարձնի հեռաուսուցման ձեռնարկի տեքստի յուրացումը:

6. Ի՞ՆՉ ԵՎ ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ԵՆ ԻՆՔՆԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐԸ

Ինքնաստուգիչ հարցերն այնպիսի հարցեր են, որոնց պատասխաններն ուղղակի կամ անուղղակի ձևով կան տվյալ դասի տեքստում: Թեստերը, որոնց միջոցով ներկայացվում են ինքնաստուգիչ հարցերը, առավելապես վերաբերում են տվյալ դասի կոնցեպտուալ կողմին: Այսինքն՝ տվյալ դասի յուրացումը ենթադրում է նշված բոլոր հարցերին պատասխանելու կարողություն, և հակառակը՝ տվյալ հարցերին գիտակցաբար տրված ճիշտ պատասխանը նշանակում է դասի բավարար յուրացում: Սակայն հնարավոր չէ ամեն ինչ ստուգել ինքնաստուգիչ

հարցերի միջոցով, քանի որ դրանք թեստեր են և ուստի՝ սահմանափակ:

Ինքնաստուգիչ հարցերն առավելապես միտված են ուսուցանվողի կողմից սեփական գիտելիքները ստուգելուն: Այս հարցերին պատասխանելը պարտադիր է ուսուցանվողների համար: Ինքնաստուգիչ հարցերին տրված պատասխանները գնահատվում են ուսուցանողի կողմից: Գնահատումը նպատակ ունի նաև պարզել հեռաուսուցման կոնկրետ փաթեթի ներդրման արդյունավետությունը՝ ի նպաստ դրա շարունակական կատարելագործման:

Ինքնաստուգիչ հարցերի պատասխանների գրքույկում կարելի է գտնել ճիշտ պատասխանները, ընդ որում՝ այնտեղ նշված է նաև, թե ինչու մյուս պատասխանները չեն կարող համարվել ճիշտ, ինչը նպաստում է հասկացման խորացմանը:

Նպատակահարմար է ինքնաստուգիչ հարցերին պատասխանելուց հետո նոր միայն անցնել հաջորդ կետին՝ առաջադրանքին:

7. ԻՆՉՊԵ՞Ս Է ԳՆԱՀԱՏՎՈՒՄ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Առաջադրանքները լինում են ամեն դասից հետո, և կատարման արդյունքներն ուսուցանողին պետք է ուղարկվեն մինչև հաջորդ դասը: ***Խորհուրդ է տրվում առաջադրանքներին անդրադառնալ ինքնաստուգիչ հարցերին պատասխանելուց հետո միայն: Ի տարբերություն ինքնաստուգիչ հարցերի՝ առաջադրանքները բաց հարցեր են և միտված են բացահայտելու ունկնդրի վերլուծական, քննադատական, ստեղծագործական միտքն ու ունակությունները:*** Որպես առաջադրանք՝ կարող է պահանջվել պատրաստել էսսե, հաշվետվություններ,

կատարել հետազոտություն և այլն: Ընդ որում՝ անպայման տրված կլինեն դրանց կատարման հետ կապված հատուկ ցուցումներ (օրինակ՝ գրավոր աշխատանքի ծավալը պետք է լինի ոչ պակաս քան 300-500 բառ) և համապատասխան չափանիշներ:

Ստորև ներկայացված են այն չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվեն ուսուցանողները՝ կատարված առաջադրանքները գնահատելու առումով.

1.ՖՈՐՄԱԼ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ – այս չափանիշները վերաբերում են համապատասխան առաջադրանքների կատարման «արտաքին» կողմին: Ֆորմալ չափանիշներին չբավարարելու պարագայում ուսուցանվողը կարող է զրկվել հնարավոր առավելագույն միավորի մինչև 20 %-ից: Ֆորմալ չափանիշները կարող են համարվել լիարժեքորեն բավարարված, եթե

ա/ պատասխանը ներկայացված է 12 տառաչափով, sylfaen տառատեսակով, տողերի հեռավորությունը 1,5

է, պահպանված է ձախից՝ 3, աջից՝ 2, վերևից և ներքևից 2 սմ հեռավորությունը:

բ/ տեքստում բացակայում են սրբագրական, խմբագրական բնույթի և գիտական ապարատի հետ կապված թերությունները:

Ա և Բ կետերից յուրաքանչյուրով առանձնացված չափանիշներին չբավարարելու դեպքում ուսուցանվողը կարող է զրկվել հնարավոր առավելագույն միավորի մինչև 10%-ից:

2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՄ ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Բովանդակային կամ կոնցեպտուալ առումով առաջադրանքի պատասխանը կարող է հավակնել

հնարավոր առավելագույն միավորի մինչև 80%-ին: Բովանդակային չափանիշներն են՝

2.1 Հեռաուսուցման փաթեթների մշակման սկզբունքների համաձայն՝ շաբաթական առաջադրանքները, որոնք ներկայացված են լինելու հեռաուսուցման ձևաչափին համապատասխանող տեքստում (հեռաուսուցման ձեռնարկ), պահանջում են այս կամ այն մեդիա-նյութի (տեսաֆիլմ, հոլովակ, տեքստի հատված և այլն) ինքնուրույն վերլուծություն: Ուսուցանողը ներկայացված վերլուծության ինքնուրույնությունը պետք է գնահատի հետևյալ չափանիշների դիրքերից.

Ա Եթե առաջադրանքի պատասխանում նկատվում է հեղինակի ինքնուրույնությունը, ինքնատիպությունը, առաջարկվող տեսակետի հիմնավորվածությունը, ինչը,

սակայն, չի ուղեկցվել համապատասխան տեսական նյութի իմացությամբ */այսինքն՝ հեղինակն առավելապես ապավինել է սեփական կարողություններին, բայց ոչ այդ կարողությունների և աշխատասիրության համադրմանը/,* ապա տվյալ առաջադրանքի համար ուսուցանվողը չի կարող հավակնել բովանդակային մասով նախատեսված առավելագույն միավորի 50 % -ից ավելիին:

Բ Եթե առաջադրանքի պատասխանում նկատվում է հեղինակի ինքնուրույնությունը, համապատասխան տեսական

նյութի յուրացվածությունը, ձեռքբերված գիտելիքների կիրառմամբ վերլուծություն կատարելու հանգամանքը, ապա ուսուցանվողը կարող է հավակնել հնարավոր առավելագույն միավորի մինչև 80 %-ին:

2.2 Եթե առաջադրանքի պատասխանն աչքի է ընկնում տեսական նյութի իմացությամբ, բայց թույլ է հիմնավորվածության և վերլուծական առումներով, ապա պատասխանը պետք է գնահատվի բովանդակային մասով նախատեսված առավելագույն միավորի մինչև 60%-ի չափով:

Այսպիսով՝ ֆորմալ և բովանդակային չափանիշներին լիարժեքորեն բավարարելու պարագայում ուսուցանվողը կարող է հավակնել առավելագույն միավորին, որի 20 %-ը ձևավորվում է ֆորմալ չափանիշների մասով, իսկ 80-ը՝ բովանդակային:

Կոնկրետ առարկայի առաջադրանքների գծով ուսուցանվողի վերջնական գնահատականը որոշվելու է հետևյալ կերպ. ընթացիկ առաջադրանքների մասով ստացած միավորների գումարը բաժանվելու է տվյալ առարկայի գծով նախատեսված առաջադրանքների քանակին: Ստացված միավորը կլինի տվյալ ուսուցանվողի վերջնական գնահատականը առաջադրանքների մասով:

8. Ի՞ՆՉ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂԸ ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս

Հեռաուսուցման համակարգի անբաժանելի մասն է ուկնդիրներին տրվող աջակցությունը: Հեռաուսուցման մեջ աջակցության ռեսուրսները երկու տեսակ են՝

- ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂԻ ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՑՑ •



Տեխնիկական ռեսուրսը ենթադրում է՝

կենտրոն, *որտեղ ուսուցանվողները կարող են հանդիպել ուսուցանողի և միմյանց հետ,*
ուղեցույց՝ *հեռաուսուցման փաթեթից օգտվելու համար,*
ցուցումներ *ձեռնարկում, որոնք կնպաստեն առարկայի յուրացմանը:*

Մարդկային ռեսուրսը ենթադրում է մասնագետ-խորհրդատուի առկայություն, ով հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ տեխնիկական այլ միջոցներով պատասխանում է ուսուցանվողին հետաքրքրող հարցերին կամ այդ հարցերը փոխանցում է համապատասխան մասնագետին: Ուսուցանվողների աջակցությունը հիմնականում ենթադրում է տեղեկատվության տրամադրում տարածաշրջանային կենտրոնների, հատուկ հեռաուսուցման նյութերի, գնահատման եղանակների, ավարտական փաստաթղթի և այլնի մասին:

ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂԻ

ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ստորագրված է տպագրության

Թուղթ՝ կավճապատ

Ֆորմատ՝ 60*84/16

Ծավալ՝ 1.75 մամուլ